ՆՈՐ ՕՐ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ

Հրաշալի Ողորմություն - Մաս 1

«Շնորհիվ մեր Աստծու գթառատ ողորմածության՝ ծագող արեգակը կայցելի մեզ բարձունքից՝:» Ղուկաս 1:78

Ողորմություն – Ներվել անարժան լինելով և բարության արժանանալ չվաստակելով

Երբ՞ կարիք ունեմ Աստծո ողորմության
Ինչ՞ կպատահի, երբ այն ընդունեմ

1. Ամաչել-Կարիք ունեմ Աստծո ողորմության, երբ ամեն բան փչացրել եմ

Ստորացված կինը: Հովհաննես 8:2-11

«Առավոտյան դարձյալ տաճար եկավ, և ամբողջ ժողովուրդը նրա մոտ էր գալիս: Նա նստած ուսուցանում էր նրանց: Դպիրներն ու փարիսեցիները նրա մոտ շնության մեջ բռնված մի կնոջ բերեցին և նրան մեջտեղ կանգնեցնելով՝ ասացին Հիսուսին. «Վարդապե՛տ, այս կինը բռնվել է հայտնապես շնանալիս: Մովսեսը Օրենքում մեզ պատվիրել է քարկոծել այսպիսիներին: Հիմա դու ի՞նչ ես ասում»: Բայց նրան փորձելու համար էին այդ ասում, որպեսզի նրան ամբաստանելու պատճառ ունենան: Հիսուսը, գետնին նայելով, մատով գրում էր հողի վրա: Բայց երբ պնդում էին իրենց հարցումը, նա վեր նայեց ու ասաց. «Ձեզանից ով անմեղ է, թող առաջինը նա՛ քար գցի դրա վրա»: Եվ դարձյալ ցած նայելով՝ գրում էր հողի վրա: Սակայն նրանք, այս լսելով, մեկը մյուսի հետևից՝ մեծից փոքր, ելան գնացին: Եվ մնացին միայն Հիսուսն ու մեջտեղում կանգնած կինը: Այդժամ Հիսուսը վեր նայեց և նրան ասաց. «Ո՛վ կին, քեզ ամբաստանողները որտե՞ղ են. քեզ ոչ ոք չդատապարտե՞ց»: Իսկ նա ասաց. «Ոչ ոք, Տե՛ր»: Հիսուսը նրան ասաց. «Ոչ էլ ես եմ քեզ դատապարտում. գնա՛ և այսուհետև մեղք մի՛ գործիր:»

• Աստծո ողորմությունը: Ներում է ինձ և ազատագրում իմ անցյալից:

«Տերն .... ինձ ուղարկել է ազատություն հռչակելու գերիներին, արձակում՝ կալանավորներին.» Եսայիա 61:1
(Հիսուս) «Ես չեկա աշխարհը դատելու, այլ փրկելու աշխարհը:» Հովհաննես 12:47
«Տե՛ր, բարի ես և ներող և ողորմությամբ հարուստ բոլոր քեզ կանչողների համար:» Սաղմոս 86:5

2. Բարկանալ- Աստծո ողորմության կարիքը ունեմ, երբ չունեմ ինչ-որ անհրաժեշտ է ինձ:

Հուսահատված մարդը: Հովհաննես 5:2-9

«Երուսաղեմում՝ Ոչխարաց դռան մոտ, մի ավազան կա, որ եբրայերեն Բեթհեզդա է կոչվում, որը հինգ սրահ ունի: Դրանց մեջ պառկած էին շատ հիվանդներ՝ կույրեր, կաղեր, գոսացածներ [որոնք ջրերի խառնվելուն էին սպասում, որովհետև Տիրոջ հրեշտակը ժամանակ առ ժամանակ իջնում էր ավազանի մեջ և ջրերը խառնում. ջրերի խառնվելուց հետո ով առաջինը դրա մեջ մտներ, բժշկվում էր, ինչ հիվանդությունից էլ որ տառապեր]: Այնտեղ մի մարդ կար, որ երեսունութ տարի հիվանդ էր: Երբ Հիսուսը նրան տեսավ պառկած և իմացավ, որ արդեն երկար ժամանակ է, նրան ասաց. «Ուզո՞ւմ ես առողջանալ»: Հիվանդը նրան պատասխանեց. «Տե՛ր, ոչ ոք չունեմ, որ ջրերի խառնվելու ժամանակ ինձ ավազանի մեջ իջեցնի. մինչ ես գալիս եմ, ուրիշն ինձանից առաջ իջնում է»: Հիսուսը նրան ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ մահիճդ և քայլի՛ր»: Եվ մարդն իսկույն առողջացավ, վերցրեց իր մահիճը ու քայլում էր:»

• Աստծո ողորմությունը: Անհնարինը դարձնում է հնարավոր

«Ինչ որ անհնար է մարդկանց համար, Աստծու համար հնարավոր է:» Ղուկաս 18:27

3. վախենալ – Աստծո ողորմության կարիք ունեմ, երբ դիմագրավում եմ մահվանը

Մեռնող մարդը: Ղուկաս 23:39-43

«Եվ կախված այն չարագործներից մեկը նրան հայհոյում էր ու ասում. «Դու չե՞ս Քրիստոսը. փրկի՛ր ինքդ քեզ և մեզ»: Իսկ մյուսը պատասխանեց՝ նրան հանդիմանելով, ու ասաց. «Աստծուց չե՞ս վախենում, դու, որ նույն պատիժն ես կրում: Մեզ համար արդարացի է, քանզի արժանի հատուցումն ենք ստանում մեր կատարած գործերի համար, իսկ սա ոչ մի վատ բան չի արել»: Եվ Հիսուսին ասաց. «Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ քո թագավորությամբ գաս»:
Եվ Հիսուսը նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ. դու այսօր ինձ հետ դրախտում կլինես»::»

• Աստծո ողորմությունը: Փրկում է ինձ հավիտենապես

(Հիսուս) «Ես եմ հարությունը և կյանքը. ով հավատում է ինձ, թեկուզ և մեռնի, կապրի:» Հովհաննես 11:25
«Ամեն ոք, ով Տիրոջ անունը կանչի, պիտի փրկվի:» Գործք 2:21
«Տերը սպասում է, որ ձեզ իր հաճությունը ցույց տա, և վեր է կենալու, որ ձեզ գթա. որովհետև Տերն իրավունքի Աստված է. երանելի են բոլոր նրանք, ովքեր սպասում են նրան:» Եսայիա 30:18

Հաջորդ Կիրակի – «ԿԱՐԵԿՑԻՐ ՔՈ ԸՆՏԱՆԻՔԻՆ»
Սարո Խաչիկեան